

ըջանը, կ'շնորհաւորեմ զձեզ և կարողութիւն կ'մաղթեմ:

Այս գիրն ալ յղուեցաւ Վարչութեան:

Ընտրութիւն մայր գիււանի.—Յետոյ ժողովը ձեռնարկեց Ա. Ատենապետի ընտրութեան, որուն մասնակցեցան 60 երեսփոխաններ և արդիւնքն եղաւ հետեւալը.

Գարբիէլ էֆ. Նորատունկեան 34

Հրանտ » Ասատուր 23

Յարութիւն » Նահրիկեան 2

Տըզ. Նազարէթ » Տաղաւարեան 1

Աեց քուէթուղթերու մէջ միայն Նորատունկեան գրուած ըլլալով, Նահրիկեան էֆ.ի առարկութեան վրայ, այդ վեց քուէները Գոսպարեան էֆ. չեղեալ համարեց, առարկելով թէ ուրիշ Նորատունկեան մ'ալ կայ ժողովին մէջ, Արքովրէ էֆ. Նորատունկեանը: Ասով Նորատունկեան էֆ.ի քուէները նկատուեցան 28 և Հրանտ էֆ. Ասատուրի հետ համեմատականի մնացած:


Համեմատական քուէարկութեան արդիւնքն եղաւ.

Գարբիէլ էֆ. Նորատունկեան 34 քուէ

Հրանտ » Ասատուր 27 »

Հետեւաբար 61 քուէարկուներու 34-ին քուէովը Գարբիէլ էֆ. Նորատունկեան հռչակուեցաւ Ա. Ատենապետ: Իսկ դեր— Ատենապետներու ընտրութեան մասնակցեցան 46 երեսփոխան և ընտրուեցան Բ. Ատենապետ Հայկ էֆ. Խօճասարեան 29 քուէով, Գ. Ատենապետ՝ Համբարձում էֆ. Պոյաճեան 27 քուէով: Ատենապետներու ընտրութեան մասնակցեցան 37 երեսփոխաններ և ընտրուեցան Յակոբ էֆ. Աւետիսեան (Արժրուէի) և Գէորգ էֆ. Սիմրէշեան:

«Բիւզանդիոն»



Կ. ՊՈԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

82-րդ տարեդարձը

Համբարձման տօնին Պօլսում մեծ հանդիսով տօնել են Ազգային Հիւանդանոցի 82-րդ տարեդարձը: Այս Հիւանդանոցը հիմնուել է 1832 թ. բարերար Պեղճեան Յարութիւն ամիրայի շնորհիւ: Երբ 1909 թ. Մայիսին գտնուում էի Կ. Պօլսում, իբրև պատուիրակ հանգուցեալ Տ. Տ. Մատթէոս Բ. կաթուղիկոսի, միւս երեք պատուիրակների հետ անձամբ զիտեցինք Պօլսահայերին պատիւ բերող Ազգային այդ կարևոր հաստատութիւնը: Ազ-

